ՎԴ/8977/05/21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021 թվականի դեկտեմբերի 9-ին ք. Երևան

ուսումնասիրելով ըստ հայցի Վերա Խաչատրյանի ընդդեմ Երևան տարածքի նոտար Նունե Սարգսյանի՝ 2013 թվականի փետրվարի 23-ի «Ժառանգության իրավունքի վկայագրերը չեղյալ համարելու և նոր ժառանգության իրավունքի վկայագրեր տալու մասին» որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին թիվ ՎԴ/8977/05/21 գործով ենթակայության մասին վեճը լուծելու համար Վճռաբեկ դատարանի նախագահին դիմելու վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի նոյեմբերի 17-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Վերա Խաչատրյանի ներկայացուցիչը 2021 թվականի օգոստոսի 12-ին հայցադիմում է ներկայացրել Վարչական դատարան ընդդեմ Երևան տարածքի նոտար Նունե Սարգսյանի, որով պահանջել է անվավեր ճանաչել 2013 թվականի փետրվարի 23-ի «Ժառանգության իրավունքի վկայագրերը չեղյալ համարելու և նոր ժառանգության իրավունքի վկայագրեր տալու մասին» որոշումը:

2. Վարչական դատարանը (դատավոր՝ Ռ. Խանդանյան) 2021 թվականի սեպտեմբերի 23-ին որոշում է կայացրել հայցադիմումը վերահասցեագրելու մասին՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«Սույն դեպքում պահանջի հիմքը ոչ թե նուրարի գործողությունների վիճարկումն է, այլ անմիջականորեն ժառանգման իրավահարաբերություններից բխող, ժառանգությունն ընդունելու և ժառանգության զանգվածի կապակցությամբ ժառանգների միջև ծագած վեճը, հետևաբար՝ այն վերաբերում է ոչ թե հանրային իրավահարաբերություններին, այլ ժառանգական իրավահարաբերություններին, որպիսի պարագայում այն ընդդատյա չէ ՀՀ վարչական դատարանին»:*

3. Թիվ ՎԴ/8977/05/21 գործը 2021 թվականի նոյեմբերի 1-ին մակագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մ. Տաշչյանին:

4. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր Մ. Տաշչյան), 2021 թվականի նոյեմբերի 17-ի որոշմամբ գործի ենթակայության շուրջ ծագած վեճը լուծելու նպատակով գործն ուղարկել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(...) Դատարան ներկայացված հայցադիմումի ուսումնասիրությունից երևում է, որ հենց ինքը հայցվորը, հայցադիմումում նշել է միայն վարչական իրավահարաբերություններ կարգավորող իրավանորմերը, այսինքն՝ հենց ինքը՝ հայցվորը, վիճարկվող որոշումը դիտարկել է որպես վարչական ակտ՝ հայցադիմումով նշելով, որ նոտարը ժառանգության իրավունքի վկայագրերը չեղյալ համարելու և նոր ժառանգության իրավունքի վկայագրեր տալու մասին որոշում կայացնելիս չի ստուգել դրա՝ օրենքին համապատասխանության հարցը, հաշվի չի առել որոշակի ապացույցների առկայության/բացակայության հարցը, նախքան արդեն իսկ տրված ժառանգության իրավունքի վկայագրերը չեղյալ համարելը հաշվի չի առել նորը տրամադրելու իրավական հնարավորության հարցը: Այսինքն՝ հայցադիմումի ուսումնասիրությունից անգամ երևում է, որ հայցվորը վիճարկվող որոշումը համարում է իր վիճակը վատթարացնող վարչական ակտ, իսկ առաջացած վեճը՝ հանրային իրավահարաբերություններից բխող:*

(...)

Տվյալ դեպքում, հայցադիմումի ուսումնասիրությունից երևում է, որ հայցվորը վիճարկում է հենց նոտարի գործողությունները՝ դրանք համարելով ոչ իրավաչափ և օրենքին հակասող այնպես, ինչպես և այդ գործողությունների արդյունքում կայացված նոտարի որոշումը ժառանգության իրավունքի վկայագրերը չեղյալ համարելու և նոր ժառանգության իրավունքի վկայագրեր տալու մասին, ինչի կապակցությամբ և հայցվորը դիմել է դատարան ոչ թե հիշյալ որոշումն անվավեր ճանաչելու պահանջով՝ ժառանգման իրավահարաբերություններից բխող, ժառանգությունն ընդունելու կապակցությամբ ժառանգների միջև ծագած վեճն առկա լինելու պատճառաբանությամբ, այլ դիմել է դատարան՝ նոտարի ժառանգության իրավունքի վկայագրերը չեղյալ համարելու և նոր ժառանգության իրավունքի վկայագրեր տալու մասին որոշումը վերացնելու մասին պահանջով՝ նոտարի գործողությունները ոչ իրավաչափ լինելու հիմքով իր վիճակը վատթարացնող վարչական ակտը վերացնելու պատճառաբանությամբ»:

5. Թիվ ՎԴ/8977/05/21 գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2021 թվականի դեկտեմբերի 2-ին:

Ենթակայության մասին վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը.

6. ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի կողմից 04.12.2012 թվականին տրված, սեղանամատյանի թիվ 8280 և 8279 համարների տակ գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերի համաձայն՝ Հրաչիկ Հակոբի Զաղունցի (մահացած 31.05.2012 թվականին) և Մաքսիմա Սոտրակի Զաղունցի (մահացած 28.04.1995 թվականին) ամբողջ գույքի նկատմամբ ժառանգ է հանդիսանում նրանց դուստրը՝ Վերա Հրաչիկի Խաչատրյանը: Ժառանգական գույքը, որի համար տրված են վկայագրերը, բաղկացած է Երևանի Ավան 7-րդ փողոց թիվ 62/1 հասցեում գտնվող անշարժ գույքից: Ամբողջ անշարժ գույքը բաղկացած է 78,5քմ ընդհանուր մակերեսից, որից 56,1քմ բնակելի, 22,4քմ օժանդակ մակերեսից և 476,0քմ հողից:

7. ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի կողմից 23.02.2013 թվականին կայացված՝ «Ժառանգության իրավունքի վկայագրերը չեղյալ

համարելու և նոր ժառանգության իրավունքի վկայագրեր տալու մասին» որոշմամբ չեղյալ է համարվել Վերա Հրաչիկի Խաչատրյանին 04.12.2012 թվականին սեղանամատյանի 8280 և 8279 համարների գրանցմամբ Երևան Ավան 7-րդ փողոց թիվ 62/1 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ տրված ժառանգության իրավունքի վկայագրերը և նոր ժառանգության իրավունքի վկայագրեր են տրվել հանգուցյալներ՝ 28.04.1995 թվականին մահացած Մաքսիմա Սոտրակի Զադունցին և 31.05.2012 թվականին մահացած Հրաչիկ Հակոբի Զադունցին պատկանող անշարժ գույքի նկատմամբ Վերա Հրաչիկի Խաչատրյանին, Սերյոժա Հրաչիկի Զադունցին և Արմիկ Համբարձումի Մարտիրոսյանին:

Վճռաբեկ դատարանի նախագահի պատճառաբանությունները և եզրահանգումը.

8. Սույն գործով Վճռաբեկ դատարանի նախագահի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *նոտարի կողմից կայացված որոշումն անվավեր ճանաչելու պահանջից ծագած սույն իրավական վեճը բխում է հանրային, թե՞ մասնավոր իրավահարաբերություններից:*

9. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ *«Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի»:*

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը»:*

10. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Մնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի:*

2. Քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (...) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի: (...)»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *«Առաջին ատյանի դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով»:*

11. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանը, գործի քննության ցանկացած փուլում պարզելով, որ տվյալ հայցադիմումի պահանջն ընդդատյա չէ իրեն, այն պատճառաբանված որոշմամբ վերահասցեագրում է ըստ ընդդատության»:*

12. Սույն որոշման 9-11 կետերում վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին է վերապահել այն բոլոր գործերի քննությունը, որոնց քննությունը վերապահված չէ մասնագիտացված դատարաններին, այդ թվում՝ վարչական դատարանին: Միևնույն ժամանակ օրենսդիրը սահմանել է վարչական դատարանի ընդդատության շրջանակը, որում ներառված են հանրային իրավահարաբերություններից բխող վեճերից ծագող գործերը: Փաստորեն, որևէ դատական գործի՝ վարչական կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննության ենթակա լինելու հարցը որոշվում է՝ հիմք ընդունելով այն իրավահարաբերության բնույթը (մասնավոր կամ հանրային), որից բխող վեճը հանձնվում է դատարանի քննությանը:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ օրենսդիրը վարչական դատարանի ընդդատության և առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի ենթակայության կանոնների խախտման դեպքում նախատեսել է տարբեր իրավաբանական հետևանքներ:

13. Այսպես՝ ի տարբերության քաղաքացիական դատավարության, որտեղ ենթակայության կանոնների խախտումը հայցադիմումի ընդունելության փուլում

հանգեցնում է հայցադիմումի ընդունումը մերժելուն, վարչական դատավարությունում հայցվորի կողմից ընդդատության կանոնները չպահպանելու հետևանքը հայցադիմումը վերահասցեագրելու՝ վարչական դատարանի լիազորության կիրառումն է: Վերոգրյալ կարգավորումների տարբերությունը պայմանավորված է վարչական արդարադատության առանձնահատկություններով, մասնավորապես՝ վարչական դատավարությունում դատարանի ակտիվ դերակատարմամբ:

Այսպիսով, յուրաքանչյուր դեպքում վարչական դատարանը պարտավոր է պարզել՝ արդյոք կոնկրետ գործն ընդդատյա է (ենթակա է) տվյալ դատարանին, թե՝ ոչ, և նշված հարցի կապակցությամբ բացասական եզրահանգում կատարելու դեպքում պարտավոր է հայցադիմումը վերահասցեագրել ըստ ընդդատության: Նույն իրավիճակում առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը պարտավոր է դրա ընդունումը մերժել՝ գործը քաղաքացիական դատավարության կարգով քննության ենթակա չլինելու հիմքով:

14. Հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարանջատման հարցին մանրամասն անդրադարձ է կատարվել Վճռաբեկ դատարանի՝ *«Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մրցավոր սեփականության գործակալության վարչական գործով 2016 թվականի ապրիլի 22-ի որոշմամբ*[1]:

15. Սույն գործով վիճելի իրավահարաբերության բնույթը պարզելու համար անհրաժեշտ է վերլուծել նոտարական գործողությունների իրականացման կարգը և ժառանգական հարաբերությունները կարգավորող իրավական նորմերը:

16. Այսպես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ *«Ժառանգը կարող է առանց դադարան դիմելու ժառանգությունն ընդունել այն ընդունելու համար սահմանված ժամկետի ավարտից հետո, եթե առկա է ժառանգությունն ընդունած մնացած բոլոր ժառանգների համաձայնությունը: Նման համաձայնություն պարունակող փաստաթղթերի վրա ժառանգների դրած ստորագրությունները պետք է վավերացվեն նույն օրենսգրքի 1226 հոդվածի 2-րդ կետում սահմանված կարգով: Ժառանգների նման*

[1] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/0830/05/14 որոշումը:

համաձայնությունը հիմք է նոտարի կողմից նախկինում տրված ժառանգության իրավունքի վկայագիրը չեղյալ համարելու և նոր վկայագիր տալու համար»:

17. «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Նոտարն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (...), նույն օրենքի, այլ օրենքների և իրավական ակտերի ու Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի (...) հիման վրա»:*

«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ *«Նոտարն արդարադատության իրականացմանը նպաստող հանրային ծառայություններ իրականացնող անձ է, որը Հայաստանի Հանրապետության անունից, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, իրականացնում է նույն օրենքով նախատեսված նոտարական գործողություններ և ծառայություններ: Նոտարի կարգավիճակի առանձնահատկությունները սահմանվում են միայն նույն օրենքով:*

Նոտարը նոտարական գործողություններ իրականացնում է փաստաթղթեր վավերացնելու կամ վավերացված փաստաթղթեր տրամադրելու կամ օրենքով նախատեսված այլ գործողություններ կատարելու միջոցով: (...) »:

«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Անձը, որի շահերը շոշափում է նոտարի գործողությունը կամ անձը, որին մերժվել է նոտարական գործողություն կատարելը, կարող է կատարված նոտարական գործողությունը կամ նոտարական գործողության կատարումը մերժելը բողոքարկել դատարան»:*

«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի համաձայն՝ *«Նոտարն իրականացնում է հետևյալ նոտարական գործողությունները. (...) բոլոր ժառանգների համաձայնությամբ չեղյալ է համարում նախկինում տրված ժառանգության իրավունքի վկայագրերը»:*

«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Ժառանգության ընդունման ժամկետը բաց թողած ժառանգը կարող է ժառանգությունն ընդունել ժառանգությունն ընդունած մյուս բոլոր ժառանգների համաձայնությամբ, որը պետք է ներկայացվի գրավոր: Ժառանգների նման*

համաձայնությունը հիմք է նոտարի՝ նախկինում տված ժառանգության վկայագիրը չեղյալ համարելու և նոր վկայագիր տալու համար»:

18. Ժառանգության իրավունքի վկայագիրը դատական կարգով վիճարկելու առանձնահատկություններին անդրադարձ է կատարվել Վճռաբեկ դատարանի՝ *Սերժիկ Պողոսյանն ընդդեմ ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Էմմա Շաբոյանի, երրորդ անձ Ստյոպիկ Պողոսյանի վարչական գործով 2015 թվականի նոյեմբերի 27-ի որոշման*[2]: Վճռաբեկ դատարանը եզրահանգել է. *«(…) նոտարի կողմից տրամադրված ժառանգության իրավունքի վկայագիրը ՀՀ իրավական համակարգում վարչական ակտ չէ, ինչն էլ իր հերթին նշանակում է, որ անձն իրավունք չունի պահանջել վիճարկման հայցով վերացնել իր ենթադրյալ իրավունքները և ազատությունները խախտող ժառանգության իրավունքի վկայագիրը, քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի համապատասխան կարգավորումների համաձայն՝ վիճարկման հայցն օրենսդրի կողմից նախատեսված հայցի տեսակ է, որն ուղղված է դատական ակտով միջամտող վարչական ակտն ամբողջությամբ կամ մասամբ վերացնելուն կամ փոփոխելուն: (…) Ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու պահանջը չի կարող դիտարկվել նաև որպես նոտարական գործողությունը վիճարկելու պահանջ, եթե ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու պահանջի հիմքում դրված չէ նոտարական գործողությունների վիճարկումը»:*

19. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *«Վարչական դատարանին ընդդատյա են՝ նոտարական գործողության կամ նոտարական գործողության կատարումը մերժելու իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերը (…)»:*

20. Սույն որոշման 16-19 կետերում վկայակոչված իրավանորմերի և իրավական դիրքորոշումների վերլուծությունից հետևում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է պարզել, թե արդյո՞ք Երևան տարածքի նոտար Նունե Սարգսյանի՝ 2013 թվականի փետրվարի 23-ի «Ժառանգության իրավունքի վկայագրերը չեղյալ համարելու և նոր ժառանգության իրավունքի վկայագրեր տալու մասին» որոշումն

[2] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի նոյեմբերի 27-ի թիվ ՎԴ/4901/05/11 որոշումը:

անվավեր ճանաչելու պահանջի հիմքում դրված է նոտարական գործողությունների վիճարկումը: Այսպես՝ Վերա Խաչատրյանի ներկայացուցիչը հայցի փաստական հիմքում վկայակոչել է հետևյալը. *«(…) նոտար Նունե Սարգսյանի կողմից 23.02.2013 թվականի «Ժառանգության իրավունքի վկայագրերը չեղյալ համարելու և նոր ժառանգության իրավունքի վկայագրեր տալու մասին» որոշումը հակասում է օրենքին, քանի որ չի լուծում ժառանգատուներից Յուրա Զադունցի կողմից իր իրավանախորդների՝ ծնողների ժառանգական զանգվածի ընդունման, իսկ մահվանից հետո, նրան պատկանող ժառանգական զանգվածի ծավալի որոշման, այն ընդունած լինելու հարցերը, առկա չէ որևէ ապացույց առ այն, որ Սերյոժա Հրաչիկի Զադունցը օրենքով նախատեսված որևէ հիմքով ընդունել է իր ծնողների և եղբոր ժառանգությունը, այն ընդունելու ժամկետը բաց է թողել օրենքով նախատեսված հարգելի համարվող հիմքերից որևէ մեկով, որի պայմաններում նույնիսկ ժառանգատուների ժառանգությունն ընդունած ժառանգների համաձայնությունը չէր կարող հիմք հանդիսանալ ժառանգությունը չընդունած ժառանգին ժառանգության վկայագիր տալուն»:*

21. Այսպիսով՝ Վերա Խաչատրյանի հայցի առարկան 2013 թվականի փետրվարի 23-ի «Ժառանգության իրավունքի վկայագրերը չեղյալ համարելու և նոր ժառանգության իրավունքի վկայագրեր տալու մասին» որոշումն անվավեր ճանաչելն է, իսկ հայցի փաստական հիմքը՝ ժառանգի կողմից ժառանգության ընդունման իրավաչափությունը նոտարի կողմից չստուգելը և ժառանգության զանգվածը չհստակեցնելն է: Այսինքն՝ տվյալ պարագայում ժառանգության իրավունքի վկայագիրը վիճարկվում է նոտարի գործողությունների՝ ոչ իրավաչափ լինելու հիմքով, հետևաբար սույն գործով իրավական վեճը բխում է ոչ թե մասնավոր, այլ հանրային իրավահարաբերություններից:

Վերոգրյալի հաշվառմամբ, նկատի ունենալով, որ սույն գործով Վերա Խաչատրյանի և Երևան տարածքի նոտար Նունե Սարգսյանի միջև ծագած իրավական վեճը բխում է հանրային իրավահարաբերությունից, թիվ ՎԴ/8977/05/21 գործը ենթակա է ՀՀ վարչական դատարանին:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

թիվ ՎԴ/8977/05/21 գործն ըստ հայցի Վերա Խաչատրյանի ընդդեմ Երևան տարածքի նոտար Նունե Սարգսյանի՝ 2013 թվականի փետրվարի 23-ի «Ժառանգության իրավունքի վկայագրերը չեղյալ համարելու և նոր ժառանգության իրավունքի վկայագրեր տալու մասին» որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ենթակա է ՀՀ վարչական դատարանին:

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ**